եա՞ց գնա բարկութիւնն ընդ չունս։ Մեռա՞ն թագաւորք և չունք ի միասին։ Հաւասարեա՞ց թագ ընդ անարգին։ Մեռան ծառայ և տէր ի միասին, և ազատեաց ըզնոսա մահ։ Զծառայն ազատեաց ի լծոյ, և զտէր նորա ի հոգո՞ց։ Աղախին իբրև զտիկի՞ն չոգաւ։ Տառապեալն իբրև զերջանի՞կն։ Զի այլակերպք էին ի կենդանիս, հաւասարեա՞ց զնոսա մահ ի դժոխս։ Այն ամենայն ցանկութիւնք աչաց, ապականեցա՞ւ ի միում ժամու։ Խառնակեցա՞ն հեշտեալք ընդ հեղձեալս, չփոթեցա՞ն գլխակունք ընդ գլխակունս։ Հեղձա՞ւ մանուկ առ ծերոյ։ Տեսիլ որ չար է քան զամենայն, հեղձա՞ւ տղայ որ եկաւ ի կեանս ընդ ծերոյ որ կատարեաց զկեանս իւր։ Խառնակեցա՞ն աղջկունք ընդ պառաւունս։

# ԱԶԳԻՍ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՊԱՔԻՆՈՒՄԸ

Մինչդեռ թերթս մամուլի տակ էր, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ստացաւ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Օգոստոս 20 թուակիր Շրջաբերական գրութիւնը, որով կը տեղեկացնէր թէ Ազգիս Ծերունազարդ Վեհ. Հայրապետը թոքատապով տառապելէ յետոյ 20 օրերու տեւողութեամբ եւ բաւական լուրջ ու մտահոգող հանգամանքով, շնորհիւ բժշկական ուշադիր դարմաններու եւ հոգածու խնամքներու, Նորին Ս. Օծութիւնը վերստացած է իր առողջութիւնը եւ սկսած է արդէն իր հայրապետական զբաղումներուն։

Այս վերջի պարագան ընդհանուր ուրախութիւն պատճառեց այստեղ եւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հեռագրով իր եւ Միաբանութեան խնդակցութիւններ ներկայացուց Ս. Եկեղեցւոյս Վեհ. Հայրապետին։

Սոյնի միջոցաւ կուտանք յիշեալ Շրջաբերականին եւ Ս. Պատրիարք Հօր խնդակցական հեռագրին եւ տրուած պատասխանին պատճէնները։

Թիւ 742 — 24 Օգոստոս 1927 թ., Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ
Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆԻՆ

*Սոյն օգոստոս ամսի 3-ին առաւօտեան անսպասելի կերպով Ազգիս ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ-ը տկարացաւ, որ արտայայտուեց տաքութեան բարձր աստիճանով, R. 38-39,3։ Իսկոյն և եթ հրաւիրուեցին տեղական բժիշկները, որոնք մանրազնին քննութիւն կատարեցին և համապատասխան միջոցներ ձեռք առան հիւանդութեան առաջն առնելու համար։*

*Նոյն օրը (օգոստոս 3) երեկոյեան Երեւանից հրաւիրուեցին հետևեալ բժիշկներ՝ Հայաստանի Կարմիր Խաչի Նախագահ բժշկապետ Սպանդարեան Կամսարական և Համալսարանի պրոֆեսոր բժշկապետ Լեւոն Յովհաննիսեան։ Բժշկական խորհրդակցութեամբ որոշուեց հիւանդութիւնը՝ աջ կողմի թոքի վարի մասի բորբոքումն* (Pneumonie)։ *Նշանակեցին համապատասխան դեղեր, որոշեցին բժշկութեան եղանակը և յանձնարարեցին տեղական բժիշկներին ղեկավարուել ընդհանուր խորհրդակցութեամբ արձանագրուած ցուցումներով։*

*Հայաստանի Կարմիր Խաչի Նախագահ բժշկապետի յանձնարարութեամբ Էջմիածնի Կարմիր Խաչի հիւանդանոցի աւագ բժիշկ Անանեան և նրա օգնական Բժ. Ղազարեան բուժակի հետ միասին ամենայն օր առաւօտեան, ճաշին և երեկոյեան, յաճախ գիշերները եւս, կանոնաւորութեամբ այցելում էին և ամենայն խնամք ու բժշկական հոգացողութիւն ցոյց տալիս։ Յիշեալ բժշկապետներն եւ Կարմիր Խաչի պատասխանատու քարտուղար Բժ. Վահան Արիբէգեանի մասնակցութեամբ, համարեա ամենայն օր երեկոյեան Երեւանից գալիս էին Կարմիր Խաչի ավտոմոբիլով այցելութեան և վերին աստիճանի ուշադիր և խնամոտ վերաբերմունք ցոյց տալիս ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ-ին շուտով բժշկել-կազդուրելու համար։*

*Բնականաբար, Գերագոյն Խորհրդի Սրբազան անդամներն ու ամբողջ միաբանութիւնը հիւանդութեան առաջին իսկ ժամից իրենց որդիական և բարոյական պարտք համարեցին ամէնօրեայ հերթականութեամբ, գիշեր-ցերեկ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ-ի մօտ լինել Վեհարանում հսկելու և ամեն խնամք ու ծառայութիւն անելու Ծերունազարդ ՀԱՅՐԱՊԵՏ-ի առողջութիւնը որ առաջ վերականգնելու համար։*

digitised by A.R.A.R.@

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ուրախ է յայտնելու, որ այսպիսի խնամքի ու բժշկական հսկողութեան և յատկապէս Հայաստանի Կարմիր Խաչի Երեւանի և Էջմիածնի բժիշկների մատուցած գնահատելի ծառայութեան ու սիրալիր աջակցութեան շնորհիւ Ազգիս Ծերունազարդ ՀԱՅՐԱՊԵՏ-ը քանօրեայ բաւական լուրջ և մտահոգութիւն պատճառող հիւանդութիւնից յետոյ, այսօր, փա՛ռք Աստուծոյ, ապաքինուած է և բժշկապետների խորհրդով արդէն այս երկու օրս մահճից վեր է կացել և զբաղւում է Հայրապետական գործերով:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը պարտք համարեց ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ-ի առողջական վիճակի մասին ճշգրիտ տեղեկութիւն յայտնել այն շրջաբերական գրութեամբ անմիջապէս Կիլիկիոյ Շնորհազարդ Տ. ՍԱՀԱԿ Բ. Կաթողիկոսին, Երուսաղէմի Պատրիարք Ամենապատիւ Տ. ԵՂԻՇԷ Սրբազան Արքեպիսկոպոս Դուրեանին, Կ. Պոլսոյ Պատրիարք Ամենապատիւ Տ. ՄԵՍՐՈՊ Արքեպիսկոպոս Նարոյեանին և Գերապատիւ թեմակալ Առաջնորդներին և թեմական խորհուրդներին ի միամտութիւն իրենց և հայ հաւատացեալ համայնքների:

Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի՝ ԲԱԳՐԱՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Ի ստ. Դիւանապետի ԹԱԴԷՈՍ Ծ. ՎՐԴ.
Քարտուղար Կ. ՔՈՋԱՐԵԱՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Էջմիածին

Փա՛ռք կուտանք Աստուծոյ Ձեր Վեհափառութեան ապաքինումին համար: Հանդերձ Միաբանութեամբ եւ ժողովուրդով կ'աղօթենք Ձեր Ս. Օծութեան առողջութեան համար:

17 Սեպ. 1927. ՊԱՏՐԻԱՐՔ ԴՈՒՐԵԱՆ

Պատասխան

Էջմ-ծին. 21 Սեպտ. 1927.

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՄԵՆ. ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄ

Շնորհակալութիւններ: Կ'օրհնենք Միաբանութիւնն ու ժողովուրդը:

ԳԷՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ

## ՍԻՈՆԻ ԱՐՁԱԳԱՆԳԸ

❊ ՍԻՈՆի վերելումը ուրախութիւն պատճառեց մեզ: Կրօնական լուրջ եւ հիւթեղ թերթի մը հրատարակութիւնը անհրաժեշտ պէտք մըն էր, մանաւանդ արտասահմանի հայ գաղութներուն համար: ՍԻՈՆ յարմարագոյն բարձունքն էր իր հոգեկան նշոյլները սփռելու համար վայրավատին Հայութեան: . . . Դպրեվանքի-ներու արտին շատ մօտիկ է այդ հրատարակութիւնը, եւ պիտի ջանանք մեր մասնակցութիւնն ալ բերել անոր:

Բերա - Կ. Պոլիս ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆԱՐՈՅԵԱՆ
(այժմ Պատրիարք Կ. Պոլսոյ)

❊ *ՍԻՈՆը մեծ ընդունելութիւն գտած է հոս, ջերմապէս կը շնորհաւորեմ Ձեր անդուլ ջանքերը:*

Մանչէսթըր ՂԵՒՈՆԴ ԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

❊ Երբեմնի այնքան փայլուն անցեալ ունեցող մը բոլորող ՍԻՈՆ Ամսաթերթին դադարումը երկար տարիներէ ի վեր խղճի խայթ մը եղած է Ս. Աթոռոյ Միաբանութեան համար: Այսօր սակայն այն Ամսաթերթին վերելումը ինչպէս Ս. Ուխտին, նոյնպէս ի սփիւռս աշխարհի ցրուած Հայութեան համար փառք ու պարծանքի առիթ մըն է: ՍԻՈՆը հետզհետէ կը պճնուի եւ կը նոխանայ կրօնաշունչ գեղեցիկ եւ յանկուցիչ մտածումներէ զատ, հին եւ ժամանակակից Հայ եկեղեցական Պատմութեան անծանօթ մնացած մասերու բաղդատական ուսումնասիրութիւններով եւ հին ու աւերածոյ վանքերու յիշատակներու պատմագրութիւններով: Հայ եկեղեցւոյ սկզբունքներու համաձայն եւ ինչպէս հայեցի աչքերով դիտուած ուսումնասիրութիւններ եւ ստուգութիւններ առաւելապէս աչքառու հանգամանք մը ստացած են Ամսաթերթին մէջ:

Կը շնորհաւորեմ մեր Ամեն. Հայրախնամ Ս. Պատրիարք Հօր իմաստութեան եւ հեռատես խոհականութեան վրայ, որով ի լոյս բերաւ գեղեցիկ մտածումը վերակենդանացնելու ՍԻՈՆը, աջակից ունենալով Ս. Աթոռոյ Պատ. Տնօրէն Ժողովը դրան յաջողութեան համար եւ խմբագրութեան գործին ղեկավարումը յանձնեց կարող եւ փորձառու ձեռքի մը յանձին Ձեր Սրբազնութեան, որ կրցաւ իր շուրջը համախմբել նաեւ այնքան ձեռնհաս գրիչներ ի փառս Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ մանաւանդ ի պարծանս Առաքելական Ս. Աթոռոյ:

Կ. Պոլիս ՍՄԲԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ
(Պատրիարքական փոխանորդ)

❊ Ուրախ եմ շատ ՍԻՈՆ ամսաթերթի հրատարակութիւնը ձեզմով վերսկսած ըլլալուն համար: Զօրս օրուան՞ եւ աւելի երկար ժամանակ քաղուած մեռեալ-

digitised by A.R.A.R.@